

ՀԱՅ ԲԱՐՔԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ
(Վիկտոր Կատվալյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)*

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Լիպարիտի Կատվալյանն արգեն 60 տարեկան է: Ծնվել է 1961 թ. հուլիսի 10-ին Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում: 1967–1977 թթ. սովորել է տեղի Ս. Մակարյանի անվան դպրոցում: 1979 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: Ուսումնառությունն ավարտել է 1984 թ. Կատվալյանն առանձնահատուկ հետաքրքրություն է ցուցաբերել հայոց լեզվի նկատմամբ:



Այս շրջանում են դրսևորվում նրա լեզվական հետազոտությունները կատարելու ունակությունները. ձևավորվում էր ապագա լրջախոհ գիտնականը: 1984 թ. Վ. Կատվալյանը գերազանցությամբ ավարտում է համալսարանը և ընդունվում ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան: 1991 թ. «Հնչյունների համակցական փոփոխությունները ժամանակակից հայոց լեզվում» թեմայով պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ասպիրանտուրան ավարտելուց հետո՝ 1987–1993 թթ., աշխատանքի է անցնում ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: Երբ փիլ. գ. դ., պրոֆ. Երջանկահիշատակ Հր. Հակոբյանի նախաձեռնությամբ 1993 թ. Գալատում բացվում է անկախության շրջանի տարածաշրջանային առաջին պետական բուհը, Վ. Կատվալյանը հրավիրվում է Գալատի պետական համալսարան՝ աշխատելու որպես դասախոս, այնուհետև՝ 1998–2004 թթ., ղեկավարում է համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը, իսկ 2004–2012 թթ. բանասիրական ֆակուլտետի ղեկանն էր: 2012 թ. Վ. Կատվալյանը ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենն է: Այդ ընթացքում՝ 2016 թ., նա պաշտպանում է «Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ» թեմայով թեզ և ստանում բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Թե՛ Գալատի պետական համալսարանում, թե՛ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում Վ. Կատվալյանը ծավալել է ուսումնագիտական, կազմակերպչական, վարչական ակտիվ գործունեություն: Մի հայացք զցելով նրա անցած ուղուն՝ տեսնում ենք, մի կողմից՝ սիրալիր, ազնիվ, բարեհամբույր, պատրաստակամ ու կենսասեր մարդուն, մյուս կողմից՝ սկզբունքային,

* Ներկայացվել է 10. VI. 2021 թ., ընդունվել է տպագրության 15. VI. 2021 թ.:

խիստ ու պահանջկոտ գիտնականին և գիտության կազմակերպչին: Մարդուն և ճշմարիտ գիտնականին բնորոշ այս հատկանիշների շնորհիվ է նրան հաջողվում աշխատավայրում ստեղծել փոխըմբռնման ու փոխվստահության անկաշկանդ աշխատանքային մթնոլորտ:

Այնուամենայնիվ, նման անհատների գործունեությունն ուսումնասիրելիս ու ասպա գնահատելիս նախ և առաջ պետք է արժեքները նրանց ներդրումն ու ավանդը գիտության տվյալ ոլորտում: Այս տեսակետից քննելով Կատվայան-գիտնականի գործունեությունը՝ կարելի է աներկբա փաստել, որ նրա լեզվաբանական ուսումնասիրություններն իրապես նոր ձեռքբերումներ են հայերենագիտության, մասնավորապես հայ բարբառագիտության մեջ:

Վ. Կատվայանի գիտական գործունեությունը սկսվում է XX դարի 80-ական թվականներից, երբ նա սկսում է մասնակցել երիտասարդ գիտնականների հանրապետական գիտաժողովներին՝ ներկայացնելով ժամանակակից հայերենի հնչյունափոխությանը վերաբերող դիտարկումներ՝ կապված հնչյունափոխության տեսակներին, հայերենի բաղաձայնական խմբերում արտահայտված հիմնական ուղղություններին: Արդի հայերենում հնչյունների համակցական փոփոխությունների և այլ հնչյունափոխությունների հետ ունեցած դրանց հարաբերակցությանը վերաբերող ուսումնասիրությունների արդյունքները հետագայում տեղ գտան թեկնածուական ատենախոսության մեջ:

Վ. Կատվայանի հետաքրքրությունների շրջանակում ներառված են այնպիսի լեզվական իրողություններ, որոնք խնդրահարույց են, լուծում պահանջող կամ էլ վերաարժեքման կարիք ունեն: Մասնավորապես խոսքը վերաբերում է արդի հայերենի գոյականների հոլովման համակարգում դրսևորվող անկանոնություններին, որոշյալ դերանունների յուրահատկություններին, բարդ ստորադասական նախադասությունների դասակարգման հարցերին և այլն [տե՛ս, օրինակ, «Արդի հայերենի գոյականի հոլովման համակարգում դրսևորվող անկանոնությունների մասին» (Գավառ, 2004), «Մի քանի նկատառում արդի հայերենի որոշյալ դերանունների վերաբերյալ.— «Լեզու և լեզվաբանություն»» (Երևան, 2004, № 1–2), «Հայոց լեզվի շարահյուսության հարցեր» (Գավառ, 2003) և այլ հոդվածներ]:

Դասախոսական աշխատանքի ընթացքում Վ. Կատվայանը հեղինակել է ուսումնամեթոդական օժանդակ ձեռնարկներ, որոնք հասցեագրված են եղել աշակերտներին, դիմորդներին ու ուսանողներին՝ նպատակ ունենալով նրանց փոխանցել հայերենի ուղղագրությանը և կետադրությանը վերաբերող գիտելիքներ ու նպաստել դրանց գործնական յուրացմանը [«Ուղղագրական և կետադրական ուղեցույց (օժանդակ ձեռնարկ աշակերտների, դիմորդների և ուսանողների համար)» (Երևան, 1998), «Բաղադրյալ բառերի ուղղագրական բառարան» (Երևան, 1999)]:

Վ. Կատվայանը ինքնատիպ մոտեցում է ցուցաբերել թեղադրության տեքստերը կազմելիս: Դրանք բովանդակային առումով «տարօրինակ են», սակայն տպավորիչ են ու հիշվող, միաժամանակ ուղղագրական բարդություն ունեցող մեծ քանակությամբ բառեր են պարունակում:

Խիստ կարևորելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր լեզվակիր պետք է լեզվական որոշակի գրագիտություն ունենա, Վ. Կատվայանը ուսանողու-

յան համար կազմեց մի ձեռնարկ ևս, որտեղ ներկայացրեց լեզվական գիտելիքների այն նվազագույն պաշարը, որին պետք է տիրապետեն բոլորը՝ անկախ իրենց մասնագիտությունից [«Գիտելիքների նվազագույն պաշար (ժամանակակից հայոց լեզու), մեթոդական ձեռնարկ» (Երևան, 2010)]:

Վ. Կատվալյանի գիտական գործունեության հետագծին հետևելիս ակներև է դառնում, որ նրա հետաքրքրությունների կիզակետում հայ բարբառագիտության հիմնահարցերն են: Բարբառագիտությունը, թերևս, հայերենագիտության այն ոլորտներից է, որտեղ ավելի շատ են հարցականները: Եվ դա պատահական չէ: Դարեր շարունակ բարբառների գրանցումների բացակայությունը, գրառվածների ուսումնասիրության նկարագրականությունը, գրական լեզվի և բարբառի տարանջատ քննությունները, բարբառային երևույթների ոչ լիարժեք, հաճախ էլ ոչ ճիշտ մեկնությունները, բարբառների մշտատև գոյությունը ժխտումը և այլ իրողություններ խոչընդոտում են դրանց թե՛ համաթամանակյա, թե՛ տարաթամանակյա ուսումնասիրություններին: Այս առումով Վ. Կատվալյանի՝ բարբառներին նվիրված 50-ից ավելի հոդվածները, 4 մենագրությունները խսկապես խոշոր ու անուրանալի ներդրում են հայ բարբառագիտության մեջ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ գիտնականը չի գնացել տրոբված ուղիով, խուսափել է գիտությունը ոչինչ չտվող արտաքին, տեսանելի իրողությունների նկարագրականությունից և գնացել խորքային վերլուծությունների ճանապարհով՝ բարբառների ուսումնասիրության ուղղությամբ ձևավորելով նոր մոտեցում ու վերաբերմունք հայ բարբառագիտության մեջ:

2014 թ. լույս է տեսնում «Հայ բարբառագիտության հարցեր» հոդվածների ժողովածուն, որտեղ ներկայացված են ինչպես ընդհանուր-տեսական, այնպես էլ առանձին բարբառներին նվիրված գիտարկումներ, որոնք խիստ արդիական են և կարևոր նշանակություն ունեն ընդհանրապես հայերենի ուսումնասիրության համար: Նշենք այդ գիտարկումներից մի քանիսը: Գրական լեզու-բարբառ հարաբերություններում գերազնահատվում է գրական լեզվի դերն այն աստիճան, որ որոշ լեզվաբաններ հակապատմական «կանխատեսումներ են» անում բարբառների վերացման վերաբերյալ: Վ. Կատվալյանը իրավացիորեն նշում է, որ ընդհանրապես լեզու-գրական լեզու-բարբառ հարաբերությունների ոչ ճիշտ, փաստազուրկ մեկնաբանությունները խանգարում են բարբառների առաջացման և պատմական զարգացման, արտալեզվական գործոնների ու հասարակական վերաբերմունքի, նրանց դասակարգման և սահմանման, գրական լեզուների ձևավորման և այլ լեզվական իրավունքների վերաբերյալ ճիշտ պատկերացումներ կազմելուն: Բայագետի բարբառի ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են նաև այլ իրողություններ: Այսպես, բարբառագետները հայտնի «Աճառյանի օրենքի» պարագայում շատ շեղումներ են նկատում, ուստի տրվում են լրացուցիչ բացատրություններ ու ճշգրտումներ, մինչդեռ լեզվաբանի գիտարկումները, հիմք ունենալով Բայագետի բարբառի առանձնահատկությունները, թույլ են տալիս վերա-ձևակերպելու և ունենալու շեղումները բացառող «Աճառյանի օրենք»: Շատ կարևոր է նաև այն մտահանգումը, որ գրական լեզվում առկա շատ իրողություններ, որոնք դժվար է բացատրել հենց գրական լեզվի միջոցով, հնարավոր է բացատրել բարբառային նյութի հիման վրա: Այս մոտեցումն էլ Վ. Կատվալ-

յանին հնարավորություն է տվել ամբողջական լուծում տալ մեսրոպյան է և և գրերի հնչյունական արժեքին և ուղղագրությանը վերաբերող հարցերին: Նշենք, որ բարբառների հետ կապված այս և այլ հիմնահարցերն առավել ամբողջական ու փաստային արծարծվել են 2016 թ. լույս տեսած «Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ» ստվարածավալ աշխատության մեջ (534 էջ): Այստեղ արդեն համակողմանի ուսումնասիրության են ենթարկված Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները Վանի, Դիաղինի, Մշո, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառների հետ: Գրքում հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական հսկայածավալ նյութ է շրջանառության մեջ դրվել՝ ներկայացնելով նշված բարբառների լեզվական առանձնահատկությունները, դրանց առնչակցությունները և կատարելով հնչյունաքերականական քննություն՝ զուգադրական-վիճակագրական մեթոդով:

Վ. Կատվալյանի գլխավորած բարբառագետների խումբը բարբառագիտության ոլորտում նպատակաուղղված ու արդյունավետ գործունեություն ծավալեց 2013 թ. սկսած՝ Գիտության պետական կոմիտեի Ֆինանսական աջակցությամբ կազմակերպելով և փուլ առ փուլ իրականացնելով բարբառագիտական գիտարշավներ Գեղարքունիքի, Կոտայքի և Արագածոտնի մարզերում: Եթե նախկինում բարբառային նյութերը հիմնականում հավաքվում էին միջնորդավորված (ուսանողների և այլոց միջոցով) ձևով, ապա այս դեպքում շփոթանքը բարբառախոսների հետ անմիջական էին ու տեխնիկական միջոցների կիրառմամբ, որոնք հնարավորություն էին տալիս խուսափելու թյուրըմբռնումներից: Այս գիտարշավների ընթացքում հավաքած նյութերը Վ. Կատվալյանը ներկայացրել է երկու ստվար հատորներում՝ «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր», գիրք 1. Գեղարքունիքի մարզ (Երևան, 2018, 402 էջ), գիրք 2. Կոտայքի մարզ (Երևան, 2020, 492 էջ): Ընթացքի մեջ է նաև Արագածոտնի մարզին նվիրված հատորի կազմութունը: Ինչո՞վ են արժեքավոր այս աշխատությունները: Նախ՝ ներկայացված են նշված տարածաշրջաններում գործածվող բարբառներն ու խոսվածքներն իրենց հնչյունական, քերականական նկարագրերով, ապա՝ տեսաձայնագրումների և հարցումների միջոցով գրանցվել են բարբառային ու բանահյուսական նյութեր՝ ժողովրդագրական տվյալներով և փաստերով հանդերձ: Ըստ էության, բացահայտվել է նշված տարածաշրջանների բարբառային ընդհանուր պատկերը արդի փուլում:

Հավելենք նաև, որ Վ. Կատվալյանը ոչ միայն հիանալի բարբառագետ է, այլև հրաշալի բանահավաք, որի ապացույցը «Քավառա խանաք-չանաք (զվարճապատումներ Բայագետի բարբառով)» (Երևան, 2009) ժողովածուն է, որտեղ հավաքված են դեպքեր՝ կապված Գավառի տարածաշրջանի իրական մարդկանց հետ, որոնցից շատերը հիմա էլ կան: Ցավոք վերջին երկու տարում՝ դեպի մարզեր բարբառագիտական գիտարշավները դադարեցվել են՝ պայմանավորված հանրապետությունում ստեղծված իրավիճակով:

Վ. Կատվալյանի տեսադաշտից դուրս չեն մնում արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրության, ուսուցման, գործառության, կանոնակարգման արդի հիմնախնդիրները, որոնց առնչությամբ ելույթներով, գեկուցումներով ինչպես ինքն է հանդես գալիս, այնպես էլ իր ղեկավարած գի-

տական հաստատությունում պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ, բանավեճեր, գիտաժողովներ՝ ուսանողների, ուսուցիչների, տարբեր հաստատությունների ներկայացուցիչների և նշված հարցերով հետաքրքրվողների մասնակցությամբ:

Նա զբաղվում է նաև ակտիվ մանկավարժական գործունեությամբ՝ դասավանդելով մի շարք լեզվաբանական առարկաներ Գավառի պետական համալսարանում:

Վ. Կատվալյանը գտնվում է իր ուժերի ծաղկման շրջանում, ունի բազում մտահղացումներ, որոնց իրագործումը հայ լեզվաբանության համար, անկասկած, կլինի գիտական ձեռքբերում: Հոբելյարին մաղթենք քաջառողջություն և հաջողություններ իր գիտամանկավարժական ու վարչակազմակերպչական գործունեության մեջ:

ԹԱԹՈՒԼ ԱՍՈՅԱՆ

Բ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի վարիչ, Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան: Գիտական հետաքրքրությունները՝ արևմտահայերենի պատմություն, Մխիթարյան միաբանության հայերենագիտական գործունեություն, ժամանակակից հայերենի բառապաշարի և քերականական կառուցվածքի ուսումնասիրություն: Հեղինակ է 1 մենագրության, 2 ուսումնական ձեռնարկի և ավելի քան 18 հոդվածի: asoyan.60@mail.ru